ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՒՂԵՐՁԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ. ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի՛ Ավագանու անդամներ,

Բյուջեի նախագիծը կազմելիս օգտագործվել են Կառավարության կողմից սահմանված խորհրդատվական բնույթ կրող հաշվարկային նորմատիվները:

Եկամուտների և ծախսերի հաշվարկման ու ներկայացման ուղղությամբ որոշակի աշխատանքներ են տարել համայնքապետարանի բաժինները, համայնքապետարանին ենթակա ստորաբաժանումները:

Բյուջեի կազմման համար անհրաժեշտ տվյալների մի մասը ստացվել են վիճակագրական վարչության Վաղարշապատի ստորաբաժանումից, պետ. նոտարական գրասենյակից և այլ կազմակերպություններից:

2022թ. բյուջեի նախագծում նախանշված են նախադպրոցական հիմնարկների, մարզադպրոցի, մշակույթի օբյեկտների պահպանմանը, նրանց նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը ուղղված աշխատանքները:

Նախատեսվում է ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը: Սպորտի բնագավառում ուշադրություն կդարձվի սպորտի մասսայականության բարձրացման խնդրին:

2022թ. ուշադրության կենտրոնում կլինեն համայնքի ասֆալտապատման, տանիքների նորոգման, կանաչապատման, լուսավորության, աղբահանության հարցերը:

Նախատեսվում է ընդլայնել համայնքի կանաչապատ տարածքները, հիմնելով նոր այգիներ, պուրակներ:

Նախագծում նախատեսված է պահուստային ֆոնդ, որի միջոցները ուղղվելու են տարվա ընթացքում ի հայտ եկած չկանխատեսված ծախսերի, անհրաժեշտության դեպքում նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման, ինչպես նաև ֆոնդային բյուջե հատկացումների իրականացման համար:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի համաձայն համայնքի 2022թ. բյուջեն բաժանված է 2 բաղկացուցիչ մասերի՝

համայնքի բյուջեի վարչական մաս /վարչական բյուջե/ և
համայնքի բյուջեի ֆոնդային մաս /ֆոնդային բյուջե/

Բյուջեի այդ բաղկացուցիչ մասերը հավասարակշռված են:

Բյուջեի եկամուտների /ծախսերի/ կանխատեսման և դրանց նախահաշիվների կազմման աշխատանքներն իրականացվում են ինչպես վարչական բյուջեի, այնպես էլ ֆոնդային բյուջեի համար առանձին:

Բյուջեի նախագծում նախատեսված եկամուտները հիմնավորված են «ՀՀ բյուջետային համակարգի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Գույքահարկի մասին», «Հողի հարկի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Բյուջեի եկամտային մասում ընդամենը նախատեսվել են հարկեր և տուրքեր 593269.3 հազ. դրամի չափով:

Ոչ հարկային եկամուտների գծով նախատեսվում է տարվա ընթացքում հավաքագրել 424573.4 հազ. դրամ:

Համայնքային ենթակայության գույքի և հողի օտարումից մուտքեր է նախատեսվում 200000.0 հազ. դրամ:

Ճապոնիայի կառավարության կողմից ֆինանսավորվող մարդկային անվտանգության դրամաշնորհային ծրագրի շրջանակում տրամադրվող **44500.0 հազ. դրամ** գումարը հատկացվելու է թիվ 13 «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի վերանորոգման համար:

Նախագծում ներառվել է նաև ՀՀ Կառավարության կողմից Վաղարշապատի համայնքին համահարթեցման սկզբունքով 2022թ. համար հատկացված 829241.7 հազ. դրամի չափով դոտացիա, սուբվենցիաներ 2288.6 հազ. դրամ, այլ ընթացիկ դրամաշնորհ 630.0 հազ. դրամ:

Ընդամենը նախատեսվում է 2022թ. ընթացքում եկամուտ՝1856000.0 հազ. դրամ, որից՝ սեփական եկամուտներ 1017842.7 հազ. դրամ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի պահանջներով

Վաղարշապատի համայնքի Ավագանուն առաջարկում եմ

1. Վարչական բյուջեում եկամուտները սահմանել հետևյալ չափերով.

ա/ անշարժ գույքի հարկ	160000.0 հազ. դրամ
բ/ գույքահարկ փոխադրամիջոցներից	350000.0 հազ. դրամ
գ/ պետական տուրք	32000.0 հազ. դրամ
դ/ տեղական տուրքեր	51269.3 հազ. դրամ
ե/ այլ ոչ հարկային եկամուտներ	424573.4 հազ. դրամ
զ/ դոտացիա պետ. բյուջեից	829241.7 հազ. դրամ
է/ պատվիրակված լիազորություն ՔԿԱԳ	5997.0 հազ. դրամ
ը/ սուբվենցիա	2288.6 հազ. դրամ
թ/ այլ ընթացիկ դրամաշնորհ	630.0 հազ. դրամ
ժ/ միջազգային կազմակերպություններից մուտքեր	44500.0 հազ. դրամ
Ընդամենը վարչական մասի եկամուտներ	**1856000.0 հազ. դրամ**

2. Վարչական բյուջեում ծախսերը սահմանել հետևյալ չափերով.

ա/ համայնքապետարանի պահպանման ծախսեր	263765.0 հազ. դրամ
բ/ կրթության համակարգի ֆինանսավորման և սուբսիդավորման ծախսեր	508001.0 հազ. դրամ
գ/ մշակույթի համակարգի ֆինանսավորման և սուբսիդավորման ծախսեր	289009.0 հազ. դրամ
դ/ սպորտի համակարգի ֆինանսավորման և սուբսիդավորման ծախսեր	121890.0 հազ. դրամ
ե/ բնակ-կոմունալ վարչության ծախսեր	28100.0 հազ. դրամ
զ/ աղբահանում և սանմաքրում	226774.0 հազ. դրամ
է/ բարեկարգման համակարգի ֆինանսավորման ծախսեր	140961.0 հազ. դրամ
ը/ փողոցների լուսավորում	75000.0 հազ. դրամ
թ/ ճանապարհային տրանսպորտ	40000.0 հազ. դրամ
ժ/ քաղաքացիական պաշտպանություն	5000.0 հազ. դրամ
ի/ գյուղատնտեսություն	2500.0 հազ. դրամ
լ/ համաքաղաքային միջոցառումների ծախսեր	20000.0 հազ. դրամ
խ/ կրթական, մշակութային և սպորտային նպաստներ	2000.0 հազ. դրամ
ծ/ սոցիալական ֆոնդ	20000.0 հազ. դրամ
կ/ պահուստային ֆոնդ	113000.0 հազ. դրամ
Ընդամենը վարչական մասի ծախսեր	**1856000.0 հազ. դրամ**

3. Ֆոնդային բյուջեում նախատեսել համայնքային ենթակայության գույքի և հողի օտարումից մուտքեր **200000.0 հազ. դրամ**: Ինչպես նաև Ճապոնիայի կառավարության կողմից ֆինանսավորվող մարդկային անվտանգության դրամաշնորհային ծրագրի շրջանակում տրամադրվող **44500.0 հազ. դրամ** թիվ 13 «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի վերանորոգման համար:

4. Ֆոնդային բյուջեի ծախսային մասում նախատեսել՝

ա/ համայնքապետարանի պահպանման ծախսեր 20000.0 հազ. դրամ

բ/ ճանապարհային տրանսպորտի ծախս 154000.0 հազ. դրամ

գ/ բարեկարգման համակարգի ծախսեր 7000.0 հազ. դրամ

դ/ բնակ-կոմունալ վարչության ծախսեր 5000.0 հազ. դրամ

ե/ սպորտի համակարգի ծախս 1000.0 հազ. դրամ

զ/ մշակույթի համակարգի ծախսեր 4500.0 հազ. դրամ
է/ կրթության համակարգի ծախսեր 53000.0 հազ. դրամ

Ընդամենը ֆոնդային մասի ծախսեր 244500.0 հազ. դրամ:

5. Բյուջեի վարչական և ֆոնդային մասերում նախատեսված եկամուտների գերակատարման դեպքում համայնքապետի որոշմամբ նշված գումարները պլանավորել որպես եկամուտ և այն ուղղել անհրաժեշտ ծախսային հոդվածներին:
6. Համաձայնություն տալ Վաղարշապատի համայնքի 2022թ. բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից համայնքի բյուջեում չկանխատեսված ծախսերի կատարմանը կամ նախատեսված ծախսերի գծով համայնքի ղեկավարի կողմից լրացուցիչ ֆինանսավորում իրականացնելուն:
7. Համաձայնություն տալ Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ վերաբաշխումներ կատարելուն:
8. Վաղարշապատի համայնքի 2022թ. բյուջեի գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ փոփոխություններ կատարելու համար սահմանել 50.0 % չափաքանակ:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: